Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, գ.խ. Նախագահ
_____ Ն. Խ. Մարիբեկյան
«05» 09 2011 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

1. Ֆակուլտետը Ավանդական բժշկության համալսարանի ուսումնագիտական և կազմակերպական հիմնական ստորաբաժանումն է, որն իրականացնում է ուսանողների պատրաստումը մեկ կամ ավելի մասնագիտությունների գծով:
2. Ֆակուլտետը հիմնադրվում է համալսարանի խորհրդի միջնորդությամբ, ռեկտորի հրամանով:
3. Ֆակուլտետն իր կազմում ունի՝
   - ֆակուլտետի դեկան
   - դեկանի տեղակալներ
   - գործավար
   - պատրաստվող մասնագիտություններին առնչվող և տեսական ընդհանուր կրթական ամբիոններ
4. Ֆակուլտետի գործունեության ղեկավարումն իրականացնում է դեկանը, որին նշանակում է համալսարանի ռեկտորը: Վերջինս, իր իրավասության սահմաններում, անում է կարգադրություններ, տալիս ցուցումներ, որոնք ֆակուլտետի բոլոր աշխատողների համար պարտադիր են:
5. Դեկանը ղեկավարում է ֆակուլտետի ողջ գործունեությունը և լիովին պատասխանատու է նրա աշխատանքի արդյունքների համար:

ԴԵԿԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեկանը անմիջապես ենթարկվում է համալսարանի ուսումնական գծով պրոռեկտորին և կատարում է ուսումնական մասի ցուցումներն ու հանձնարարությունները:

Նրա պարտականությունների մեջ մտնում է՝

1. Անմիջական ղեկավարել ֆակուլտետի բոլոր ամբիոնների ուսումնական, ուսումնամեթոդական, դաստիարակչական և գիտական աշխատանքները:
2. Խստորեն հսկել ամբիոններում ուսումնական պարապմունքների կազմակերպմանը և անցկացմանը:
3. Ամփոփել ուսանողների ամենամսյա առաջադիմությունը և հաճախելիությունը ուսումնական պարապմունքներին:
4. Կազմակերպել և անցկացնել արտադրական խորհրդակցություններ ուսանողների հետ :
5. Տալ փոխադրական և ավարտական քննությունները հանձնելու թույլտվություն:
6. Կազմակերպել ուսանողների ստուգարքների և քննությունների անցկացման հսկողությունը:
7. Նախապատրաստել և ուսումնական մաս ներկայացնել ուսանողների կուրսից կուրս տեղափոխելու տվյալները, ինչպես նաև ուսանողների հեռացման և վերականգնման փաստաթղթերը /միջնորդությունը/:
8. Նշանակել կուրսերի խմբերի ավագներ և հետևել նրանց պարտականությունների կատարմանը: Ուսանողնության շրջանում կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքներ:
9. Ղեկավարել միջամբիոնային խորհրդակցությունների և կոնֆերանսների կազմակերպումն ու անցկացումը:
10. Գիտական խմբակներում և ընկերություններում ներկայացվող ուսանողների գիտական աշխատանքների ընդհանուր ղեկավարումը:
11. Հանդիսանալ փոխադրական, ավարտական /պետական/ քննական հանձնաժողովի անդամ:
12. ժամանակին վարել դեկանատի համար նախատեսված փաստաթղթերը:
13. Դեկանի տեղակալը հաստատվում է ռեկտորի կողմից, դեկանի երաշխավորությամբ: